Հաստատված է
Տնօրինության 09.04.2026թ.-ի
Թիվ DEC 12-30 արձանագրությամբ
Ուժի մեջ է 01.05.2026թ.-ից

Դրամական միջոցների գրավադրմամբ վարկի տեղեկատվական ամփոփագիր		
Վարկառու/Գրավատու	18 տարին լրացած ֆիզիկական անձ - ավանդատու	
Վարկի նպատակ	Սպառողական	
Վարկի տեսակ	Մարման գրաֆիկով վարկ	
Վարկի արժույթ	ՀՀ դրամ	
Ավանդի արժույթ	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, եվրո, ՌԴ ռուբլի	
Վարկի նվազագույն ժամկետ	10 օր	
Վարկի առավելագույն ժամկետ	Ավանդի ժամկետ	
Նվազագույն գումար	100 000 ՀՀ դրամ	
Վարկի առավելագույն գումար	Չի սահմանվում	
Գրավի առարկա[1]՝ Ներդրված ժամկետային ավանդ	Միայն ՀՀ դրամ կամ ՀՀ դրամ և ԱՄՆ դոլար, եվրո, ՌԴ ռուբլի	Միայն ԱՄՆ դոլար, եվրո, ՌԴ ռուբլի
Վարկի տարեկան անվանական տոկոսադրույք /հաստատուն/	Գրավադրվող ՀՀ դրամով ժամկետային ավանդի տարեկան տոկոսադրույք +3%[2]	Բանկի կողմից առաջարկվող ՀՀ դրամով ժամկետային ավանդի առավելագույն տարեկան տոկոսադրույք +3%
Առավելագույն սահմանաչափ	1) ՀՀ դրամով ներդրված ժամկետային ավանդի՝ • մինչև 95%՝ անուիտետային և ազատ մարման գրաֆիկով վարկերի դեպքում, • մինչև 85%՝ միանգամյա մարումով վարկերի դեպքում: 2) Այլ արժույթներով ներդրված ժամկետային ավանդի մինչև 80%՝ անկախ մարման եղանակից[3]:	

TC 03-10#1

Վարկի տարեկան [փաստացի տոկոսադրույք]	10.8%-14.3%[4]
Վարկի տրամադրման միջնորդավճար	Չի սահմանվում
Վարկի սպասարկման միջնորդավճար	Չի սահմանվում
Մարման եղանակ	**Անուիտետային** (մայր գումարի և տոկոսագումարի ամենամսյա հավասարաչափ վճարում) **Միանգամյա** (մայր գումարի և տոկոսագումարի ժամկետի վերջում վճարում) **Ազատ մարման գրաֆիկով** (տոկոսագումարի ամենամսյա հավասարաչափ վճարում, մայր գումարի ժամկետի վերջում վճարում)
Վարկի տրամադրման եղանակ	Միանվագ՝ անկանխիկ, Բանկում հաճախորդի անունով բացված բանկային հաշվին
Արտոնյալ ժամանակահատված	Չի տրամադրվում
Վարկի վճարման պարբերականություն	Ամսական և ժամկետի վերջում
Բանկային հաշվի բացում և սպասարկում	Համաձայն Բանկում գործող ընթացիկ [Բանկային հաշիվների բացման և սպասարկման սակագների և պայմանների]
Վարկի գումարի կանխիկացում	Համաձայն [Բանկում գործող սակագների]
Ժամկետանց մայր գումարի տույժ	0.1% օրական
Ժամկետանց տոկոսագումարի տույժ	0.13% օրական
Վարկի վաղաժամկետ մարում	Վարկառուն իրավունք ունի ժամկետից շուտ կատարելու վարկի ամբողջական կամ մասնակի մարում, վաղաժամկետ մարման տույժ չի կիրառվում
Երաշխավորություն	Չի պահանջվում

FB_Internal

Վարկառուի վարկային պատմության նկատմամբ պահանջներ	Վարկի տրամադրման պահին գործող վարկային պարտավորություններ և այլ անձանց պարտավորությունների դիմաց տրամադրված երաշխավորությունները չպետք է լինեն ժամկետանց կամ դասակարգված հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի կամ անհուսալի ռիսկի դասերով:

[1] Ավանդային պայմանագրով Բանկում ներդրված ավանդը և դրա նկատմամբ պահանջի իրավունքը կարող են հանդիսանալ գրավի առարկա, եթե դրանցում նշված միջոցները.

1) Արգելանքի տակ չեն,

2)Չեն հանդիսանում այլ (այդ թվում՝ երրորդ անձանց տրամադրված) վարկի ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկա, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանցով ապահովված բոլոր, ներառյալ՝ նոր տրամադրվող վարկերի հանրագումարի համար պահպանվում է վարկատեսակով սահմանված առավելագույն վարկ/գրավ հարաբերակցությունը:

[2] Մեկ վարկը կարող է ապահովված լինել Բանկում ներդրված մի քանի տարբեր արժույթի ավանդներով: Տվյալ դեպքում՝

1) Ավանդների տարեկան անվանական (պարզ) տոկոսադրույքը տարբեր լինելու դեպքում Վարկի տոկոսադրույքը հաշվարկելիս հիմք է ընդունվում ամենաբարձր տոկոսադրույքով դրամային ժամկետային ավանդի տոկոսադրույքը,

2)Ավանդների ժամկետը տարբեր լինելու դեպքում վարկի առավելագույն ժամկետը սահմանվում է՝ հիմք ընդունելով նվազագույն ժամկետով ավանդի ժամկետը:

[3] Արտարժութային ավանդի գրավով վարկի դեպքում վարկի հասանելի գումարը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով վարկի տրամադրման պահին ՀՀ ԿԲ սահմանած փոխարժեքը:

[4] Փաստացի տոկոսադրույքի հաշվարկը կատարվում է տեղեկատվական ամփոփագրի կազմման պահին Բանկի կողմից հրապարակված ավանդի ներգրավման պայմանների հիման վրա:

Ծանոթություն

1.Նախքան պայմանագրի կնքումը Հաճախորդին տրամադրվում է Դրամական միջոցների գրավով վարկի էական պայմանների անհատական թերթիկը, որում ներկայացված են տրամադրվելիք վարկի էական պայմանները, սակագները, սպառողի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև պարտականությունները ժամանակին չկատարելու դեպքում բացասական հետևանքները:

2. Հաճախորդն իրավունք ունի պայմանագրի կնքմանը հաջորդող յոթ աշխատանքային օրվա ընթացքում միակողմանիորեն լուծել Վարկային պայմանագիրը, եթե Վարկային պայմանագրով ավելի երկար ժամկետ սահմանված չէ:

3. Վարկի տոկոսները հաշվարկվում են վարկի մնացորդի նկատմամբ՝ ելնելով տարում 365/366 օրվա հաշվարկից:

4. Վարկային հայտի դիտարկման և վարկի տրամադրման նպատակով հաճախորդը պետք է Բանկի մասնաճյուղ ներկայացնի տվյալ վարկատեսակի վարկավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը.

4.1. Անձը հաստատող փաստաթուղթ/բնօրինակ/,

4.2. Բանկի պահանջով այլ փաստաթղթեր:

5. Վարկը տրամադրվում է Բանկի բոլոր մասնաճյուղերում, բացառությամբ «Զվարթնոց» մասնաճյուղի:

6. Վարկի տրամադրման դրական որոշման կայացման գործոններ.

6.1. Վարկառուի/Գրավի համապատասխանությունը սույն փաստաթղթով սահմանված պահանջներին:

7. Վարկի մերժման գործոններ.

7.1.Հաճախորդի կողմից չեն ներկայացվել վարկ ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը,

7.2. Վարկառուի/Գրավի անհամապատասխանությունը սույն փաստաթղթով սահմանված պահանջներին:

8. Վարկի մերժման վերաբերյալ հաճախորդը ավտոմատ ծանուցվում է էլեկտրոնային փոստի միջոցով:

9. Պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո Վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացումը կատարվում է, Հաճախորդին տեղեկացում և տրամադրում՝ առավելագույնը 10 րոպեների ընթացքում:

10. Վարկի մարման նպատակով մուտքագրված ցանկացած գումար, որպես կանոն, Բանկի կողմից ուղղվում է մուտքագրման պահին առկա՝ Հաճախորդի կողմից Բանկի Վարկային պայմանագրի ուժով վճարման ենթակա գումարների, այդ թվում՝ տույժերի, սպասարկման վճարների, տոկոսների, Վարկի գումարի մարմանը: Բանկն իրավունք ունի Հաճախորդի հետ կնքվող պայմանագրում վճարման ենթակա գումարների այլ հերթականություն սահմանել:

11.Վարկի ժամկետի ավարտին Հաճախորդի կողմից վարկի մարման պարտավորությունը (ներառյալ՝ մայր գումար, տոկոսագումար, տուգանք, տույժ և այլ վճարներ) մինչև օրվա ավարտը չկատարելու դեպքում առանց Հաճախորդին լրացուցիչ ծանուցելու ավտոմատ կերպով իրականացվում է վարկի պարտավորության ամբողջական մարում գրավի (ավանդի) գումարից: Եթե գրավի (ավանդի) գումարը բավական չէ Վարկի ամբողջական մարման համար, ապա վարկի մնացած չմարված մնացորդը շարունակում է սպասարկվել որպես հաշիվների միջոցների շրջանառությամբ ապահովված սպառողական վարկ: Գրավը արտարժութային ավանդ հանդիսանալու դեպքում վարկի պարտավորության մարումն իրականացվում է վարկի փաստացի մարման պահին ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարկման փոխարժեքով:

12. Վարկառուի դիմումի հիման վրա՝ վարկի գործողության ընթացքում կամ վերջնաժամկետին կարող է լուծվել ավանդային պայմանագիրը և գումարն ուղղվել Վարկի ամբողջական մարմանը: Ավանդի ժամկետը լրացած չլինելու դեպքում ավանդի նկատմամբ հաշվարկվող տոկոսագումարների վերահաշվարկը կատարվում է ավանդային պայմանագրի համաձայն:

13. Քաղվածքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների և այլ ծառայությունների տրամադրման պայմանները և սակագները հրապարակված են Բանկի պաշտոնական կայքում՝ www.fastbank.am**, ինչպես նաև տեղադրված են Բանկի գործունեության վայրերում:**

14. ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ (ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ) ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ՈՉ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԿԱՐՈՂ Է ԵՆ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ:

15. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿԸ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԵՏՈ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ԱՔՌԱ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ ԵՎ ԿԲ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:

16. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵԶ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:

17. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ԲԱՆԿԻ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՍՏՈՎ, ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՅԼ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:

18. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԵՔ ՕԳՏՎԵԼ «ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» /www.fininfo.am/ ՀԱՐԹԱԿԻՑ: ԱՅՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

FB_Internal

ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է:

19. ԵԼՆԵԼՈՎ ՏԱՐԱԲՆՈՒՅԹ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻՑ՝ ԲԱՆԿԸ ԿԱՐՈՂ Է ՊԱՀԱՆՋԵԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ: ԲԱՆԿԸ «ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՊԱՏՇԱՃ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՐՈՂ Է «ՃԱՆԱՉԻՐ ՔՈ ՀԱՃԱԽՈՐԴԻՆ» (KNOW YOUR CUSTOMER) ՍԿԶԲՈՒՆՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՊԱՀԱՆՋԵԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԿԱՄ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՐՑԵՐ ՏԱԼ: ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՏԻ (FOREIGN ACCOUNT TAX COMPLIANCE ACT (FATCA)) ՀԻՄԱՆ ՎՐԱ ԱՄՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿՆՔԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ, ՁԵՐ՝ ԱՄՆ ՀԱՐԿԱՏՈՒ ՀԱՆԴԻՍԱՆԱԼՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔԸ ՊԱՐՁԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՆԴԱՐՏԻ (CRS) ՀԻՄԱՆ ՎՐԱ ԲԱՆԿԸ ԿԱՐՈՂ Է ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ:

20. ՎԱՐԿԱՅԻՆ ՍՔՈՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ԷՈՒԹՅԱՆԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԾԱՆՈԹԱՆԱԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՀՂՈՒՄՆԵՐՈՎ՝ **www.fastbank.am, www.abcfinance.am, www.acra.am**:

21. ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ: